ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» հոկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (03.10.2025թ.)՝ ժամը 10:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 06.10.2025թ.՝ ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, և գնման հայտով ներկայացված են ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գները.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Պայմանագրի կնքման ամսաթիվը, համարը	Ապրանքի անվանումը	Նմանատիպ ապրանքի մեկ միավորի ձեռքբերման գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր կողմնորոշիչ գին (ՀՀ դրամ)
1	Զգեստապահարաններ	18.04.2024թ., ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/05-1	Զգեստապահարաններ	22968	3445200
2	Գրասեղաններ		Գրասեղաններ	43200	2160000
3	Գրասեղաններ		Գրասեղաններ	16320	2448000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ	ք. Գյումրի Փանյան 1
Դամկար ՍՊԸ	գյուղ Արգավանդ, Սուրբ Սարգիս 1/2
«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ավան-Աճառյան 37/34
Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	9փ. /1/3 Մասիս Արարատ
Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ	ք. Երևան, Սարի թաղ 5շ., 73/1տ.
Ա/Ձ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի	Армения, Село Верин Геташен
«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	ԱՐԱՐԱՏ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ 30
ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Ք.Երևան Շեվչենկոյի փողոց 1/14

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Մասնակցի կարգավիճակ

		Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	
1	Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ	11500000	20%	13800000	5750000	20%	6900000.00	
1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	20000000	0%	20000000	6119250	0%	6119250.00	
1	Դամկար ՍՊԸ	6375000	20%	7650000	6375000	20%	7650000.00	
1	Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ	8000000	20%	9600000	8000000	20%	9600000.00	
1	Ա/Ձ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի	20830000	20%	24996000	20830000	20%	24996000.00	
1	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	100000000	20%	120000000	100000000	20%	120000000.00	
1	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	250000000	20%	300000000	250000000	20%	300000000.00	
1	«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	440000000	20%	528000000	440000000	20%	528000000.00	
2	«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	440000000	20%	528000000	3836250	20%	4603500.00	
2	Դամկար ՍՊԸ	3875000	20%	4650000	3875000	20%	4650000.00	
2	Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ	5000000	20%	6000000	5000000	20%	6000000.00	
2	Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ	8000000	20%	9600000	8000000	20%	9600000.00	
2	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	20000000	0%	20000000	20000000	0%	20000000.00	
2	Ա/Ձ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի	20830000	20%	24996000	20830000	20%	24996000.00	
2	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	100000000	20%	120000000	100000000	20%	120000000.00	
2	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	250000000	20%	300000000	250000000	20%	300000000.00	
3	Դամկար ՍՊԸ	4125000	20%	4950000	4125000	20%	4950000.00	
3	Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ	5500000	20%	6600000	5500000	20%	6600000.00	
3	Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ	10000000	20%	12000000	10000000	20%	12000000.00	
3	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	20000000	0%	20000000	20000000	0%	20000000.00	
3	Ա/Ձ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի	20830000	20%	24996000	20830000	20%	24996000.00	
3	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	100000000	20%	120000000	100000000	20%	120000000.00	
3	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	250000000	20%	300000000	250000000	20%	300000000.00	
3	«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	440000000	20%	528000000	440000000	20%	528000000.00	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 06.10.2025թ.՝ ժամը 10:30-ին և

- 1-ին չափաբաժնի մասով Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 2-րդ չափաբաժնի մասով «ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով Դամկար ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տեղեկատվություն՝ գնահատող հանձնաժողովի նիստի կասեցման վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիմքով կազմակերպվող էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով Դատական դեպարտամենտը 2025թ. սեպտեմբերի 29-ի N ԴԴ-3-Ե-ԴԴ-4136 Ե-7491 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նորայր Աղամալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» հոկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տվյալներ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխան գրության ստացման և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

Ի պատասխան Դատական դեպարտամենտի 2025թ. սեպտեմբերի 29-ի N ԴԴ-3-Ե-ԴԴ-4136 Ե-7491 գրության (կցվում է)՝ 2025թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է N 03/26/22440-2025 գրությունը (կցվում է):

1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները (ընդհանուր կողմնորոշիչ գները): Ղեկավարվելով 2025թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/26/22440-2025 գրությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների հայտերը չքննարկել, մերժել և գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովը որոշեց հաստատել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 03/26/22440-2025

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԻ
ՄՈՒՏՔ N 11-18843
ԱՄՍԱԹԻՎ 23.10.25

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Ի պատասխան Դատական դեպարտամենտի սույն թվականի սեպտեմբերի 29-ի ԴԴ/4136-25 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

- «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն մասը կարող է կիրառվել, եթե պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:

- ՀՀ կառավարության 18/05/2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

- ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականությունները ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

- նույն կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա գնման հայտով ներկայացվում է նաև ընթացակարգը կազմակերպելու կամ

Կատարող՝ Ի.Քոչարյան հեռ. 011 800-147
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք-Ադամյան փող. 1, հեռ. (+374 11) 800002, www.minfin.am

դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գինը, եթե առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ եթե աճուրդը կազմակերպվում է նշված օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա և ընթացակարգի արդյունքում ստացված նվազագույն գինը գերազանցում է գնման հայտով սահմանված կողմանորշիչ գինը, ապա հանձնաժողովը կարող է՝

- անալոգի տարբերակով հիմք ընդունելով հիշյալ կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետը, մասնակցին հայտարարել ընտրված մասնակից, կամ

- եթե չի հայտարարվում ընտրված մասնակից, ապա ընթացակարգը հայտարարել չկայացած և նույն կարգի 11-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա ընթացակարգը կազմակերպել գնման մրցակցային այլ ձևով, կրկին օգտվելով կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված կարգավորումից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

Ստորագրող
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ
2003930574

X

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

Ն ԴԴ-3-Ե-ԴԴ-4136 Ա-7491

«29» սեպտեմբերի 2025թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավանեսյան,

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ խնդրում եմ տրամադրել մեթոդական օժանդակություն հետևյալ հարցի վերաբերյալ.

www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «ՀԱՃԱԽ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» բաժնում հրապարակված «ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻՑ ՀԱՃԱԽԱԿԻ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» փաստաթղթի 12-րդ կետով տրվել է հետևյալ պարզաբանումը.

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն մասը կարող է կիրառվել, եթե պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

- ՀՀ կառավարության 04.05.2017թ. Ն 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 21-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների, բացառությամբ շինարարական ծրագրերի, ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում հայտով ներկայացվում է նաև ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գինը, եթե առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում:

Օրենքի հիշյալ նորմով սահմանված դեպքում գործընթացը կազմակերպվում է տվյալ գնման առարկայի գնման գինը պարզելու համար: Իսկ կարգի քննարկվող նորմով սահմանված կարգավորումը **չի կարող հանդիսանալ որպես գնման գին**, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է նմանատիպ գնման առարկաներին և դրանց միավոր գինը գնման հայտում ներառվում է որպես **գնման առարկայի կողմնորոշիչ գին**:

Միաժամանակ << կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգ) 10-րդ կետի.

- 2-րդ ենթակետով սահմանված է, որ եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են,
- 3-րդ ենթակետով սահմանված է, որ աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար **գնման հայտով սահմանված գինը**, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած (նշված կարգավորումը ներառված է eauction.armeps.am համակարգի կողմից ավտոմատ եղանակով գեներացվող էլեկտրոնային աճուրդի հրավերներում):

Այս կապակցությամբ խնդրում եմ տրամադրել պարզաբանում հետևյալ դեպքի վերաբերյալ.

Եթե պատվիրատուն կազմակերպում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիմքով էլեկտրոնային աճուրդ, որի դեպքում համաձայն վերոնշյալ պարզաբանման գնման հայտով սահմանված է նաև ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված **մեկ միավոր գինը որպես կողմնորոշիչ գին**, իսկ հրավերով գնման գին սահմանված չէ: Տվյալ դեպքում պարզ չէ, թե «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի հիշյալ նորմում նշված **«գնման հայտով սահմանված գին»** եզրույթը վերաբերում է գնման հայտով գնման առարկայի **գնման գին** սահմանված լինելուն, թե՞ վերոնշյալ կողմնորոշիչ գնին: Այսինքն՝ աճուրդն ամփոփվելու պահին առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը բավարար գնահատվելու դեպքում արդյո՞ք վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից՝ հաշվի առնելով, որ ընթացակարգի հրավերով գնման առարկայի գնման գին սահմանված չէ, թե՞ անհրաժեշտ է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած գինը համեմատել գնման հայտով սահմանված հիշյալ կողմնորոշիչ գնի հետ (ընդ որում, քննարկվող դեպքում մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, իսկ գնման հայտում որպես կողմնորոշիչ գին սահմանվում է նմանատիպ գնման առարկայի միավոր գինը):

Հարգանքով,

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հասցե՝ Երևան, Գրիգորի Լուսավորչի 1/1 հասցեում գտնվող
Հանրապետության փողոցի գնումների հանձնաժողովի
Հեռ.՝ (+374) 60 777, 60 788

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	Զգեստապահարան՝ լամինացված ԴՍՊ-ից՝ 18մմ հաստությամբ: Արտաքին չափսերը՝ 2000բ.*800լ.*520խոր. մմ, հետին պատը՝ լամինացված ԴՎՊ: Բաղկացած է երկու հավասարաչափ դռներից, դռները՝ եզրակալված ՄԴՖ-ի պրոֆիլներով: Զգեստապահարանի ներսում՝ վերին և ստորին հատվածներում՝ ամբողջ երկայնքով բաց դարակներ և քրոմապատ ձող: Բռնակները՝ մետաղական, ծխնիները՝ վակումային: Գույնը վենգե: Չափսերի թույլատրելի շեղումը՝ +, - 2%: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և պոլիեթիլենային պղպջակավոր պաշտպանիչ թաղանթով փաթեթավորված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը և հավաքումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը) իրականացնում է	Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ Դամկար ՍՊԸ Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ Ա/Ձ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ «ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	

	Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի: Ապրանքների արտաքին տեսքը նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ:			1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները (ընդհանուր կողմնորոշիչ գները): Ղեկավարվելով 2025թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/26/22440-2025 գրությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների հայտերը չեն քննարկվել, մերժվել են և գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:
2	Ղեկավարի գրասեղան /կողադիր և դիմադիր սեղաններով/. - գրասեղան (1800երկ.*800լ.*750բ. մմ)՝ պատրաստված լամինացված ԴՍՊ-ից՝ 18մմ հաստությամբ, երեսը և ոտքերը՝ չորս կողմից եզրակալված ՄԴՖ-ի պրոֆիլներով՝ 3,5-4սմ հաստությամբ, առանձին դարակաշար անիվների վրա՝ 3 դարակով, վերևի դարակը՝ փականով, սողնակները՝ գնդիկավոր, մետաղական, դարակի լայնքը՝ 45սմ, խորությունը՝ 45սմ, բարձրությունը՝ 60սմ: Գրասեղանի դիմային մասը՝ մինչև գետին իջեցված, լամինացված ԴՍՊ-ով փակված, կողքի պատերի լայնքը՝ 60սմ և երկշերտ: - կողադիր սեղան (1200երկ.*600լ.*500բ. մմ)՝ բաժանված 2 հավասարաչափ մասերի, բաց դարակաշարով: - դիմադիր սեղան (90երկ.*60լ.*72բ. մմ)՝ պատրաստված լամինացված ԴՍՊ-ից՝	«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ Դամկար ՍՊԸ Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ Ա/Ձ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	

	18մմ հաստությամբ, երեսը՝ չորս կողմից եզրակալված ՄԴՖ-ի պրոֆիլներով՝ 3,5-4սմ հաստությամբ: Գույնը՝ վենգե: Չափսերի թույլատրելի շեղումը՝ +, - 2% (բացառությամբ՝ միջակայքով նշված չափսերի): Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և պոլիեթիլենային պղպջակավոր պաշտպանիչ թաղանթով փաթեթավորված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը և հավաքումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը) իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի: Ապրանքների արտաքին տեսքը նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ:			
3	Համակարգչային սեղան (1200երկ.*600լ.*750բ. մմ)՝ լամինացված ԴՍՊ-ից՝ 18մմ հաստությամբ, երեսը չորս կողմից եզրակալված ՄԴՖ-ի պրոֆիլներով, աջ կամ ձախ հատվածում ամրացված 3 շարժական դարակաշար, վերևի դարակը՝ փականով, սողնակները՝ գնդիկավոր, մետաղական,	Դամկար ՍՊԸ Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ Ա/Ձ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի «ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ «ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	

	դարակի լայնքը՝ 37սմ: Սեղանի դիմային մասը՝ մինչև գետին իջեցված, լամինացված ԴՍՊ-ով փակված: Կողքի պատերի լայնքը՝ 55սմ: Գույնը՝ վենգե: Չափսերի թույլատրելի շեղումը՝ +, - 2%: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և պոլիեթիլենային պղպջակավոր պաշտպանիչ թաղանթով փաթեթավորված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը և հավաքումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը) իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի: Ապրանքների արտաքին տեսքը նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ:			

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/19» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@court.am:

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ: